

րիսպքն. և կը թափառի, աշակողմը, հրաբլխային ընդարձակ երկրի մը մէջ, ի վարազուց և շնագոյլից ասպատակեալ անտառաց մէջ, վայրենի և անժանօթ ժողովրդեան մը տաղաւարաց մէջ, որոն կարծես թէ այլանդակ ստուերը կը տեսնենք բարձր ասիան վրայ, որ կը մաղթեն մեզ չարաբաստիկ ճանապարհորդութիւն մ'ի վերայ վայրենի աշխանջ Պոնտոսի: Երկու լուսաւոր կէտք վերջին անգամ մթութիւնը կը խորտակեն, երկու կիկլոպայց բոցավառ աչաց պէս, կախարդեալ նեղուցին պահապան դուռած, Սնատուր-Ֆէնէր՝ Ասիոյ լապտերն՝ յափակողմն. և բումէլի-Ֆէնէր՝ ի ձախակողմն. որոց ոտքը առասպելական Սիմբլէկառեանի՝ աշխանջ ստուերին մէջ դեռ կը ցուցնեն մեզ ընդ ազատ իրենց կոչկոճեալ ժայռից կողմնակի անսխիւր: Ապա Եւրոպէի և Ասիոյ երկու ափունքն ուրիշ բան չեն՝ բայց երկու թուխ գիծեր. և ապա ուր և Ուայիցիս, ոչ այլ ինչ է՝ թայց ծով և օդ, ինչպէս կ'երգէր խեղճ Ովի-

դիոս: Բայց գեռ զայն կը տեսնեմ, իմ նոստանդնուպօլիսս, այն աներևութացեալ կրկին ասիանց ետեւ. կը տեսնեմ զայն աւելի մեծ և աւելի լուսափայլ քան զոր երբեք տեսած ըլլայի վայրտէ Սուլթանին կամրջէն և ի բարձանց Խակիւտարի, և կը խօսիմ առ նա և կ'ողջունեմ զնա և կը պաշտեմ զայն իբրեւ իմ երիտասարդութեանս՝ որ մայրը կը մանէ՝ վերջին և սիրելագոյն երազն: Բայց աղային ջրոյ յանկարծակի սրբսկում մը կը ցնցղկէ երեսս և գլխարկս գետին կը նետէ. — կը զարթնում. — չորս կողմն կը նայիմ. — նաւուն առաջքն անապատ է, երկիրն մառախլալին է, աշնանային ցուրտ հողմ մը ուկերքս կը սառեցնէ. իմ բարի ետեւս, ժովխաւսին բռնուելով՝ զիս թողուց. ուրիշ բան չեմ լսեր բայց լապտերաց զօղանջիւնը և նաւուն ճռնչելը, որ կը փախչի՝ որորերով յալեաց, գիշերոյ մթութեան մէջ. . . . իմ արեւելից գեղեցիկ երազս ընցաւ:

Վ Ե Ր Ջ

Ն Ի Ո Ւ Ե Օ Ր Ք Հ Է Ր Ա Լ Տ

Ա Ղ խ ա թ ռ ի ս մ ե ճ ա գ ոյ ն օ թ ա գ ի թ ն :

Եփսոսքաբեան կեանք ունի. հիմնադիրն է Ճէյմս Կորտոմ՝ Պէմնէզ. Նախ օրը եօթն կամ ութ հարիւր օրինակ կը հրատարակէր. այսօր քանի մը հարիւր հազարնիւ կը հանէ: Երբ առաջին անգամ հրատարակուեցաւ, խեղճ բան մը էր, համառօտ նիւթեր պարունակելուն համար. կը բովանդակէր կարճ ինքնադիր դրուածք մը, եւրոպական լրոց համառօտութիւն մը, զորոնք առագոստաւոր նաւերով եկած սակաւաթիւ լրագիրներէ կը քաղէր, և յետոյ մէկ քանի տող զանազան տեղեկութիւններէ զատ ուրիշ բան չկար:

Ինչպէս կը տեսնենք, պէտք էր զայն կտրգաւորել: Պէմնէզ որ միշտ գլխաւոր խմբագիր եղաւ, տեղական օրագրութիւններ սկսաւ ընել. և որովհետեւ յԱմերիկայ վաճառականութիւնն կարգէ զուրս զարգացած էր՝ գէմ զննելով հին Եւրոպիոյ, հարկ եղաւ որ ամեն օր երկմտից յողուած մը հրատարակուի: Լրագիրն միշտ կը յառաջանար և զգալի կերպով օրինակէ կ'աճէին:

Պէմնէզ յԵւրոպիոյ եկած լրագրոց թերթերը աւելի շուտ ընդունելու համար՝ նաւակներ զննց, սրանք ընդ առաջ երթալով նաւերուն՝ օտար լրա-

գրոց ծրարները կ'առնուին և զտնոնք ուրիշ սուբհանդակաց կու տային, պորս անմիջապէս 'ի քաղաքն կը տանէին : Այս կերպով Հէրալտ իրեն տեղեկութիւնները օր մը յառաջ կրնար տալ քան զայլ լրագիրս :

Պէմնէդ հազորդակցութեան ծառայութիւն մը հաստատեց Եւրոպիոյ և և Ամերեկոյ գլխաւոր քաղաքաց մէջ : Ասոնք եղան յառաջ քան զգիւսան հեռագրին : Յետոյ Հէրալտ բոլոր նախանձորդ լրագիրները գերազանցեցին իրեն հեռագրալրոց մեծութեամբն, ճշգրտութեամբն և զանազանութեամբն : Ամենուն ծանօթ է՝ որ զլիվինկոդոն, յափրիկէ դրիոյը Պէմնէդ էր. ճէկըդ նաւուն ճանապարհորդութիւնն իր ծախքովն եղաւ, որ գիտե՞նք թէ ինչ տըխուր կատարած ունեցաւ :

Արդ ահաւասիկ ինչպէս կողմուած է խմբագրութեան պաշտօնարանն : Հէրալտի խմբագրութիւնն՝ գրողաց չորս գաս կը բովանդակէ . խմբագիրը գրողը, յարդարիչը (forbiciat), գրուցատուք (reporters), թղթակիցք : Առաջինքն կը պատրաստեն այն խոհական հիմնական յօդուածները՝ որ ամբիկեան լրագրոց տարող տառիւն էլը կը բռնեն, յետոյ թատերական, երաժշտական, գրագիտական և արուեստական քննադատութիւններ. — յարդարիչը՝ թղթակցութիւնքը աչքէ կ'անցընեն, հետաքրքրական գլխակարգութիւններ կը դնեն, հեռագրալուրերը կը սրբադրեն, և փոխանակութեամբ տուած լրագիրներէն կը քաղեն հատուածներ, որոնք օրը եօթն կամ ութ հարիւրի կը հասնին. — իսկ գրուցատուք, ինչպէս բոլոր աշխարհ՝ խմբագրութեան որսորդն են : Ամեն տեղ կը անտուին ասոնք, և միոյ օրագրողի հրամանաց կը հղատուակին, որոնք քաղքին ամեն գործերը պէտք են դիտնալ. կը զրկուին որ ընթանան ընդ լայնութիւն և ընդ երկայնութիւն քաղաքին՝ տեղեկութիւնս ստանալու, դիպուածներ ճշգրտել, ժողովոյ մը համառօտութիւնը, ճառի մը համառօտագիր տեղե-

կութիւնը, հրդեհի մը, սպանութեան մը, գողութեան մը պատմութիւնն ընելու համար :

Ճարտար գրողատուներէն մէկը զիմակաւոր պարահանգիսի մը կ'երթայ, իրիկուան ժամը տասին՝ տեղերը կը դիտէ, ամենուն և ամեն բանի վրայ տեղեկութիւն կը ստանայ, կէս զիշերին կը դառնայ 'ի պաշտօնարանն. ահա կը տեսնես որ հետեւեալ օրը լրագիրին երկու սիւններէն աւելի հանգիսին նուիրուած է, գրեթէ չորսէն ինչուան տասն հազար բառերով : Հէրալտի այս բանեցուցած կերպով, առաւօտեան երկուք ու կիսուն հանգիսած դիպուածը՝ երկու ժամ վերջը մանրամասն կը հոչակուի մէջ տեղ. և օրագրութիւնն միւրիւններուն պէս յոռի, առանց ոգոյ, առանց եղբակացութեան, առանց բանասերդութեան, առանց վիպասանութեան, անհանճար չէ, այլ ընդհակառակն՝ ճշմարիտ, ստույգ, ճիշդ պատմութիւն, տեղեղն վրայ ժողովուած հանգամանօք հանդերձ :

Ունի տասնհինգ խմբագիր գրիւներ, տասն յարդարիչս, երեսուն և հինգ գրուցատուք և թարգմանիչս, որոց առատապէս հաստատուն ոտնիկ կը տրուին, և երբեմն երբեմն աւելցընելով :

Յոյսնի չէ Պէմնէդի ունեցած թրդթակցաց թիւն. Եւրոպիոյ և Միացեալ Նահանգաց ամեն գլխաւոր քաղաքաց մէջ կը գտնուին :

Ամերիկեան պատերազմին տոնըն Հէրալտ իւրաքանչիւր բանակի զնգին մէջ թղթակից մ'ունէր, մինչդեռ ուրիշ լրագիրներ երկու հատ ունենալնուն վրայ դո՛հ կ'ըլլային՝ պատերազմէն տեղեկութիւններ առնլու համար : Այս առթիւս մէջ Դայնը լրագիրն, պատերազմի դաշտին մէջ միայն մի թղթակից ունեցաւ : Յամին 1866 եւրոպական պատերազմին ժամանակ, Պէմնէդի ծախիւք յեւրոպա եկան ութ մասնաւոր թղթակիցք, որպէս զի իւրաքանչիւր ազգաց բանակներուն հետ երթան, մինչդեռ լոնտրայի, Բարիզու-

և Վիեննայի թղթակիցը՝ պատերազմական գաղտին վրայ գրած տեղեկու-
թիւնները կը զրկէին :

Եւ որովհետեւ յայտնի է՝ թէ որ լրա-
դիրն որ ճիշդ լուրեր կը ծանուցանէ,
այն աւելի կը վաճառուի, անոր համար
ամերիկեան լրագրաց մէջ մեծ հակա-
ռակութիւն կայ. և հազարաւոր կոփք
կ'ըլլան այլ և այլ լրագրաց գրուցատու-
ներու մէջ՝ իրարմէ առաջ հռչակելու
հետաքրքրական տեղեկութիւնքը :

Նաև Ամերիկայ մէջ քիչ լրագիրք կան՝
որոնք Նիու-Եօրքէն երեք կամ չորս
հարիւր մըն հեռու կարենան զու-
ցատու զրկել, անկէ հեռագրալուրեր
ընդունելու, իւրութեան երկու կամ
երեք հարիւր տողարի գնով: Հէրալտի
հետ մրցող պարբերական գրուածք
միայն երկու կամ երեք հատ են, բայց
յաղթութիւնն միշտ իրեն է: Երբ կալ-
էսի իշխանն Միացեալ Նահանգաց այ-
ցելութեան գնաց, Նիու-Եօրքի լրագիրք
մրցեցան թէ ով աւելի թղթակիցներ
պիտի ունենար Ալպերդ Եղուարդ երե-
տասորդին անցած ճանապարհին վրայ-
անոր համար գրուցատուք մեծ վէճ ու-
նեցան թէ ով նախ հեռագրին պիտի
տիրապետէ, բայց 'ի գրողներէն՝ որ իշ-
խանին կը սպասէին անոր խօսակցու-
թիւնը ափ յափոյ գրելու համար. կա-
յին հօն օրապրոց գրուցատուք, որոնք
իշխանին ետէն կ'երթային, և երբեմն
երբեմն հեռագրատունը կը վազէին և
իրենց տեսչաց երկայն տեղեկութիւններ
կը զրկէին: Հասնելով 'ի Սուրբ Յովհան-
նէս Նոր երկրի, ուր իշխանն 'ի պատիւ ի-
րեն տրուած պարգանդիսի մը ներկայ
պիտի ըլլար, Հէրալտի և Դիւպիւռնայի
թղթակիցը միայն էին իրարու գիմաց,
իմացան 'ի հեռագրատան՝ որ առջի օրն
հանգիպած զիպուածի մը պատճառաւ
մէկ մէկ լուր միայն կրնար զրկուիլ 'ի
Նիու-Եօրքի երկու գրուցատուք աղէկ
հասկըցան որ հանդէսն տասնին սկսե-
լով, իրենք կէս գիշերէն առաջ չէին
կրնար հեռագիր գտնել, և յօգուածն
երկար և մանրամասն ըլլալով, անոնցմէ
մէկը պէտք էր գտնիլ ընել իր տեղեկու-

թիւնը: Լսեցին նաև որ առջի դնացո-
ղը միայն կրնար հեռագրել: Իւրացան
չիւր որ քաշուեցաւ մտածելու թէ ինչ-
պէս կարենայ իր ընկերէն յաղթու-
թիւնը յափշտակել: Մէկտեղ սեղան
նստան, քիչ խօսեցան կռուոյն ելից վրայ
մտածելով, Բանկարծ Հէրալտի թըղ-
թակիցն սեղանէն կ'ենէ, կը վազէ փու-
թով և տափնապաւ 'ի հեռագրատուն, և
գրասեղանի մը վրայ Աստուածաշունչ
մը գտնելով՝ կ'ըսէ գործակատարին.
Դեռ ժամը վեց է, կը դառնամ տասնու-
մէկին և թերեւ քիչ մ'առաջ այլ Ա-
հաւասիկ քեզի հօս Աստուածաշունչ մը.
որովհետեւ չեմ կրնար ապահով ըլլալ
որ ես բացարձակապէս կարենամ վերջը
զհեռագիրք բռնել, անոր համար այս Աս-
տուածաշնչիս առջի երեսէն սկսէ զար-
նել 'ի Նիու-Եօրք, բայց երբ կը դառ-
նամ, զայն մէկդի կը թողուս և կը
սկսիս իմ տեղեկութիւնս զարնել Յայտ-
նի է որ սյա ամեն բանն ընելէն առաջ
Պէմէնզի իմաց տուաւ: Այն ատեն Հե-
րալտի թղթակիցն գնաց 'ի պարա-
հանգին, ուսկից կէս գիշերուընէ ա-
ռաջ մեկնեցաւ, և իրեն յօգուածը գրե-
լով, պատուիրեց հեռագրական գործա-
կատարին փոխել զքնագիրը և իրեն տե-
ղեկութիւնը զարնել: Առաւօտեան երե-
քին ամեն բան լմեցաւ: Դիւպիւռնայ օրա-
դիրն պէտք եղաւ որ մէկդի թողու իր
յօգուածը, մինչդեռ հետեւալ օրը Հե-
րալտ կը հրատարակուէր երկայն և ճշ-
գրտապատում՝ նկարագրութեամբն,
որ երեսիի դէպք մը համարուեցաւ:

Նիու-Եօրքի լրագրոց յօրինուածու-
թիւնն Եւրոպայի ներուռն պէս են: Ա-
ռաւօտեան առաջին ժամերուն հիմնա-
կաւ յօգուածագրիչը՝ կը ժողովին ընդ
վարչութեամբ գլխաւոր խմբագրապե-
տին՝ խօսակցելու օրուան բոլոր խըն-
դրոց վրայ: Աւելի ուշ, տեսուչը կը կանչէ
զգրուցատուս և կը ծանուցանէ անոնց
թէ ինչ երկայնութիւն յօգուածներ պէտք
են գրել: Ամենքը այն ատեն կը սկսին
աշխատիլ, և երեկոյեան երկուքէն մինչեւ
առաւօտեան երեք, քնագիրք, թերթիք,
ձեռագիրք, անվերջանալի հեռագրու-

լուրք կը սկսին շարուիլ: Վերջին լուրերն առաւօտուան երեքուկիսուն առնները կ'ընդունին, և ապա երես երես օրագիրն կը շինուի և կ'ը տպուի:

Ինչպէս յիտալիա լրագրոց զխաւոր շահու աղբիւրն ծանուցմունքն են, այսպէս նաև Միացեալ Նահանգաց մէջ: Նիւ Եօրք Հէրալտ այս դուրսաբեայ միջոցով տարին 4 կամ 5 միլիոն վաստը կեցաւ:

Եթէ Պէմսէդ մէկ կողմէն շատ կը վատարկի, պէտք է ճանչնալ որ երբեք յետս չի նահանջիր, և ոչ երբեք նահանջած է ամենէն իսկ աւելի տարապայման ծախուց առջև: Բաւական է ըսեն՝ որ 25,000 լիւրայ ծախք ըրաւ Ալլանտեան հեռագրին միջոցով ընդունելու համար:

Բրուսիոյ թագաւորին Ատենի բայման ճառն, յամին 1867: Ուրիշ առթով մ'ալ 35,000 լիւրայ ծախք ըրաւ առ ամերիկեան պատգամաւորս ոմանս տըրուած սեղանի մը 'ի Կորչպըով իշխանէ խօսեցեալ բարեմաղթութեանց բընադիրը ունենալու համար: Իրեն ծախքովը Նիւ Եօրքի Ռդերեւութական Պաշտօնարանը կանգնեց, զոր ինքն կը պահէ, որպէս զի միջնորոտային փոփոխմանց վրոյ ճշգրտայն տեղեկութիւններ ունենայ: Վերջերս կէս միլիոն տուաւ բարեբաւական դործոյ մը համար:

Հէրալտի հիմնադրին որդին՝ արդի տէրը՝ հօրը արժանաւոր զուակ է:

ՆԱԽՈՐԴՔ ՅԱՐՋԱՅԻՆ ԲԵՒԵՈՒ

Քանի մը տարի առաջ յԱռձեռն Ժամանակագրութեան տպագրեալ 'ի Լոնտրա՝ 'ի բառն Arctic circle (Discovery of) կը տեսնենք ցուցակ մը ճանապարհորդաց և նաւորդաց, որք զընացին 'ի հիւսիս՝ գտնալու նոր երկիրներ և փնտրելու անցք մը հիւսիսային Ուկրանոսին մէջ Ատլանդեանէն 'ի խաղաղական, անցնելով Պեհրինկայ նեղուցը:

« Այլ և այլ փորձեր կողմն, զանազան եղանակաւ 'ի բազում ճանապարհորդաց՝ մտնելու ձեան և սառուցի գաւառները: Սկանտինավեանք՝ յԹ, Ժ, ԺԱ, դարուն. Վենետկեցիք, Սլաւոնացիք և Բորգոնացիք:

Նոյն ցուցակը կը թարգմանեմք և միանգամայն կը ծանուցանեմք երևելի ճանապարհորդի մը անունը 'ի բաց թողուիլը, որ անոնց պարագլուխ համարեալ է, այսինքն Յովհաննու Քապոդոյ, Սերաստիանոսին հօրը. և այս կը վաւերացուի բազմաթիւ յիշատակարանօք և վենետկեան գաւառացի ւաններուն ձեռագրովը:

ցիք յաջորդ ժամանակները շարունակեցին զայն խուզարկելն: Յարջային բեւեռնաւոր ուղեորութիւնքն, սկսեալ 'ի Ժեզարու մինչև ցԺԻ, հետեւեալներն են.

ԱՄ Տեառն

1498 —

1517 —

Սերաստիանոս Քապոդոյ կը հասնի Արջային գաւառները, իւր երկրորդ ճանապարհորդութիւնը մի և նոյն կողմը (2):

1 The Manual of Dates A Dictionary of Reference of the most important facts and events in the History of the World, by George H. Townsend. — London Frederick Warne et C.° 1877.

2 Ուղեւոր

1498 — Յովհաննէս Քապոդոյ կը հասնի Արջային երկրները:

1517 — Սերաստիանոս Քապոդոյ իւր առաջին ճանապարհորդութիւնը կ'ընէ դէպ 'ի նոյն կողմերը: